

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
34

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
34

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

34

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

*«Բանբեր Մատենադարանի» 34, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2022: 448 էջ (ներդիր 8 էջ):*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են
պատմությունը, բանասիրությունը, արվեստին նվիրված հոդվածներ և այլ նյութեր:*

ՀԱՂՈՐԴՈՒՄ
REPORT
СООБЩЕНИЕ

ՄԱՆԵԱ, ԷՌԵԱ, ՇԻՐԻՆՅԱՆ*

DOI:10.57155/EKVN1038

ԲՅՈՒՉԱՆԴԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ
XXIV ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

2022 թ. օգոստոսի 21-ից 27-ը Վենետիկում և Պադովայում կայացավ բյուզանդագետների XXIV համաշխարհային կոնգրեսը: «Բյուզանդական ուսումնասիրությունների միջազգային ասոցիացիա»-ի (International Association of Byzantine Studies կամ՝ Association Internationale des Études Byzantines – AIEB) որոշմամբ 2022 թ. համաժողովի կազմակերպումը վստահված էր «Բյուզանդական ուսումնասիրությունների իտալական ասոցիացիա»-ին (AISB-Associazione Italiana di Studi Bizantini կամ՝ Իտալիայի Բյուզանդագիտական ուսումնասիրությունների ազգային կոմիտե)՝ Վենետիկի «Կա Ֆոսկարի» և Պադովայի համալսարանների աջակցությամբ և համագործակցությամբ:

Արդեն մեկ դար է (առաջին կոնգրեսն անցկացվել է Բուխարեստում 1924 թ.) Բյուզանդական հետազոտությունների համաշխարհային համաժողովը տեղի է ունենում հինգ տարին մեկ պարբերականությամբ¹, որին ամբողջ աշխարհից հրավիրվում են հազարից ավելի գիտնականներ:

1948 թ.՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո, ստեղծվեց Բյուզանդագիտական միջազգային ասոցիացիան (AIEB), որի հիմնադրման գաղափարն առաջացել էր մինչ այդ կայացած բյուզանդական համաժողովների ընթացքում: Այս կառույցի մշտական գործադիր մարմինը կազմում է միջազգային բյուրոն, որը բաղկացած է անդամ ազգային կոմիտեների ներկայացուցիչներից: Յուրաքանչյուր համաժողովի ընթացքում տեղի է ունենում միջազգային բյուրոյի հիմնական, ընդհանուր հավաքը (General Assembly), որի

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, պ.գ.դ., erna.shirine@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ նոյեմբերի 18, 2022, գրախոսելու օրը՝ դեկտեմբերի 2, 2022:

¹ Հարկ է նաև նշել, որ համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում՝ ընթացիկ հարցեր լուծելու համար, միջազգային բյուրոն հրավիրում է այսպես կոչված գործադիր ժողով (կամ միջկոնգրես՝ Inter-Congrès), որը, որպես կանոն, տեղի է ունենում Արեւմուտքում:

ընթացքում հաջորդ հինգ տարվա համար ընտրվում է աշխատանքային բյուրո (նախագահ, քարտուղար, գանձապահ), ներկայացվում են բյուրոյի անդամների հաշվետվությունները, քննարկվում ու քվեարկությամբ որոշվում է հաջորդ համաժողովի անցկացման վայրը և այլ կարևոր ընթացիկ հարցեր: Ազգային կոմիտեները, որպես կանոն, ունեն նույնատիպ կառույց և քվեարկություններին մասնակցում են մեկ հիմնական (նախագահի կամ նրա ներկայացուցչի) և մեկ խորհրդատվական ձայնով²: Բյուզանդական հետազոտությունների միջազգային ասոցիացիան իր գործունեության սկզբից, Պոլ Լեմերլի նախագահությամբ և Դիոնիսիոս Զաքիթինոսի առաջարկով, որոշում է կայացրել հրատարակել «Տեղեկատվության և համակարգման տեղեկագիր» (Bulletin d'Information et de Coordination), որի նպատակն է եղել միջազգային մակարդակով խթանել բյուզանդագիտությունը, նպաստելով աշխարհով մեկ բյուզանդագետների միջև տեղեկատվության փոխանակմանը: «Տեղեկագիր»-ն առաջին անգամ լույս է տեսել 1964 թ., իսկ այժմ նրա գործառույթը ստանձնել է aiebnet.gr կայքը: 2003 թ. Անդրոսում կայացած միջկոնգրեսի ընթացքում որոշում է ընդունվել տեղեկատվությունն այդուհետ տարածել էլեկտրոնային եղանակով: 2017 թ. տեղեկագիրը ստացել է AIEB «Byzantine News» անվանումը՝ հրատարակվելով հիմնականում ամիսը երկու անգամ³:

Սույն թվի օգոստոսին կայացած XXIV համաժողովին մասնակցեցին աշխարհի տարբեր երկրներից ավելի քան 1700 գիտնական (200-ը՝ առցանց): Մինչ այժմ խնդրո առարկա համաժողովը միայն երկու անգամ է անցկացվել Իտալիայում (1936 թվականին Հռոմում և 1951 թվականին՝ Պալերմոյում): Պատահական չէր համաժողովի անցկացման վայրը՝ Վենետիկը, քանի որ այն մշտապես հիշատակվել է որպես «Quasi alterum Byzantium» և պատմականորեն կապված է Բյուզանդական կայսրության հետ, ինչպես նաև եղել է հույների «գուռը» դեպի Արևմուտք: Կոնգրեսը Վենետիկում անցկացնելու որոշումը նաև լավ հնարավորություն էր քաղաքի և նրա պատմական անցյալի միջև կապն ամրապնդելու համար: Համաժողովի աշխատանքները հիմնականում անցկացվեցին Վենետիկի «Կա Ֆոսկարի» համալսարանի Սան Զորե Տնտեսագիտության Կամպուսում (San Giobbe Campus of Economics, Ca' Foscari University of Venice) և մեկ օր՝ 2022 թ. օգոստոսի 25-ին, Պադովայի համալսարանում (Complesso del Beato Pellegrino և Palazzo Liviano, University of Padua): Կոնգրեսի բացման արարողությունը տեղի ունեցավ երկուշաբթի՝ օգոստոսի 22-ին, Վենետիկի «Լա Ֆենիչե» (La Fenice) հանրաճանաչ օպերային թատրոնում:

² Տե՛ս Կանոնադրություն, <https://aiebnet.gr/statutes-en/>:

³ «Տեղեկագիրը» հասանելի է Բյուզանդական ուսումնասիրությունների միջազգային ասոցիացիայի (AIEB-ի) կայքէջում. <https://aiebnet.gr> <https://aiebnet.gr/newsletter-archive-mailchip/>

ողջույնի խոսքով հանդես եկան մի շարք պաշտոնյաներ թե՛ Իտալիայի կառավարությունից և թե՛ Բյուզանդական հետազոտությունների միջազգային ասոցիացիայից⁴: Հանդիսավոր բացումից հետո սկսվեց առաջին լիագումար նիստը, և զեկուցմամբ հանդես եկան հայտնի բյուզանդագետ, պատմաբան, Սենտ Էնդրյուսի և Քոչ համալսարանների պրոֆեսոր Պոլ Մագդալինոն՝ («Մտորումներ և ճշգրտումներ համաժողովի ու դրա հիմնական թեմայի վերաբերյալ. “Բյուզանդիա՝ կամուրջ աշխարհների միջև”») («Reflections and Elaboration on the Congress and Its Main Theme: ‘Byzantium – Bridge Between Worlds’»), Ալբրեխտ Բերգերը («Կոստանդնուպոլիսը միջին բյուզանդական դարաշրջանում, “Constantinople in the Middle Byzantine Age”) և Նևրա Նեչիփոզլուն («Ուշ բյուզանդական Կոստանդնուպոլիսի վանքերը», “Monasteries of Late Byzantine Constantinople”):

Բյուզանդագետների XXIV համաշխարհային կոնգրեսի նշանաբանն էր՝ “Byzantium – Bridge Between Worlds” («Բյուզանդիա՝ կամուրջ աշխարհների միջև»), որն առաջարկել էր գեռևս Թուրքիայի Ազգային կոմիտեն՝ 2021 թ. օգոստոսին Ստամբուլում կայանալիք համաժողովի համար: Տարբեր պատճառներով այն հետաձգվեց և տեղափոխվեց Վենետիկ⁵, սակայն Իտալիայի կոմիտեն պահ-

⁴ Ամբողջ տեղեկատվությունն առավել մանրամասն կարելի է կարդալ բյուզանդական ուսումնասիրությունների XXIV համաշխարհային կոնգրեսի պաշտոնական կայքէջում. <https://byzcongress2022.org>

⁵ Ի սկզբանե բյուզանդագետների XXIV համաշխարհային կոնգրեսը պետք է տեղի ունենար Ստամբուլում, դեռևս 2021թ.: Այս հանգամանքը բավականին մանրամասն ֆննարկել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Արևշատյանը ԳԱ ֆեյսբուքյան էջում. «...սակայն դրան խանգարեցին որոշ հանգամանքներ: Առաջինը դա կորոնավիրուսի համավարակն էր, իսկ երկրորդը՝ Թուրքիայի նախագահի հրամանով Ս.Սոֆիա տաճարը մզկիթի վերածելու պարագան, տանար, որը 1935թ. Աթաթուրքի հրամանով մզկիթից վերածվեց թանգարանի, հետագա տարիներին բյուզանդական մշակույթի և արվեստի միլիոնավոր երկրպագուներ և զբոսաշրջիկներ գրավելով Ստամբուլ: Ոչնչով չարդարացված այդ ֆայլը բողոքի մեծ ալիք առաջացրեց, սակայն թուրքական ղեկավարության որոշումը չհաջողվեց կանխել. չնայած ՅՈՒՆԵՍԿՈ-ի, Բյուզանդագիտական միջազգային ընկերության նախագահի, տարբեր երկրների գիտական հեղինակավոր հիմնարկների և համալսարանների ղեկավարների, Բրիտանյա բարձրաստիճան առաջնորդների (այդ թվում՝ Հռոմի պապի, Ռուսիոյ Կիրիլ պատրիարքի, Գարեգին Բ. վեհափառի) նամակներին և զանազան ուղերձներին, ինչպես նաև՝ ընկերության հարյուրավոր անդամների ստորագրահավաքին: Ի պատասխան դրա, Բյուզանդագիտական միջազգային ընկերության բյուրոն որպես բողոք չեղարկել համաժողովի անցկացումը Ստամբուլում և նոր փվերակության արդյունքում Վենետիկը դարձավ մեկ տարով հետաձգված կոնգրեսի անցկացման վայրը»: Հարկ է հավելել, որ Բյուզանդագետների Հայկական ազգային կոմիտեն ևս ուղերձ-հայտարարությամբ միացավ բողոքաբարկման այդ գործընթացին: Հանուն արդարության պետք է նշել, որ համաժողովի անցկացումը Ստամբուլում չեղարկվեց ոչ թե Բյուզանդագիտական միջազգային ընկերության բյուրոյի (որը երբեք չէր դիմի նման ֆայլի), այլ Թուրքիայի պետական կառույցների կողմից (ինչը մեկ անգամ ևս ցույց է տալիս, թե որքան ֆաղափականացված է բյուզանդագիտությունը և որքան աչալուրջ են այդ երկրում խնդրո առարկա գիտանյութի հետ առնչվող հարցերի հան-

պանեց թեման և հիմնական ծրագիրը՝ որոշակի փոփոխություններ և նշանակալի լրացումներ մտցնելով:

Բյուզանդական ուսումնասիրությունները՝ ուստի և համաժողովը, ընդգրկում են հետազոտությունների լայն շրջանակ՝ հնագիտությունը, պատմությունը, բանասիրությունը, աստվածաբանությունը, արվեստի պատմությունը, երաժշտությունը և այլ ոլորտներին վերաբերող՝ ինչպես հունարեն, այնպես էլ այլալեզու աղբյուրներ և ուսումնասիրություններ: Հասկանալի է, որ այս բոլոր ոլորտներն ընդգրկող նիստերը բազմաթիվ էին և համաժողովի աշխատանքները՝ չափազանց ծանրաբեռնված: Յոթ օր շարունակ դրանք սկսվում էին առավոտյան 9-ին և վերջանում 19-ից հետո: Օրը բաժանված էր 2 կամ 2,5 ժամ տևողությամբ շորսական նիստի, որոնցում ներգրավված էին չորս հիմնական խմբեր. լիազուցված նիստ (տևողությունը 90 րոպե)⁶, կլոր սեղան, թեմատիկ նիստ, ազատ հաղորդակցություններ և պաստառներ (վերջին երեք խմբերի նիստերը տևում էին 120 րոպե): Վերջին երեք խմբերի զեկուցումների համար նախատեսված էր 20/30 րոպե՝ ներառյալ քննարկման ժամանակը: Այս խմբերի թեմաների բազմազանությունը կարելի է ծանոթանալ համաժողովի ծրագրում, որն ունի նաև էլեկտրոնային տարբերակ⁷: Բացի այդ, լիազուցված նիստերի ամբողջական զեկուցումները և մյուս նիստերի ամփոփումները հրատարակված են երկու առանձին գրքով⁸, որոնք ևս հասանելի են համացանցում⁹:

դեպ): Թերևս դա կապված էր հրաշագեղ Սբ. Սոֆիա տաճարի հարցի հետ, սակայն չափազանց զարմանալի էր, որովհետև նախորդ տարբերակների ընթացքում Թուրքիայի Ազգային կոմիտեն ջանք էր խնայում, որպեսզի հասնի բաղձալի նպատակին՝ բյուզանդագետների համաշխարհային համաժողովն անցկացնել Կոստանդնուպոլիս-Ստամբուլում (այդ առիթով ես՝ որպես Բյուզանդագետների Հայկական Ազգային կոմիտեի նախագահ զարմանքի և տագնապի ուղերձ հղեցի Բյուզանդագիտական միջազգային ընկերության բյուրոյին):

6 լիազուցված նիստերին, որոնք միտված են մասնակիցների ուշադրությունը սևեռելու վերջին զարգացումների և ապագա մարտահրավերների վրա, հիմնականում մասնակցում են հրավիրված մասնագետներ: Հասկանալի է, որ հրավիրող կողմը մշտապես ներկայացնում է իր գիտնականներին այդ նիստերում, համապատասխանաբար, այս կոնգրեսում ևս լիազուցված նիստերի զեկուցողներն էին իտալացի և թուրք բյուզանդագետներ, թեև վերջիններս՝ որպես Բյուզանդական կայսրության ժառանգորդներ, մշտապես ընդգրկված են այդ նիստերում:

7 https://byzcongress2022.org/wp-content/uploads/2022/08/ICBS22_Final-Programme_19_08_2022.pdf

8 *24th International Congress of Byzantine Studies. Proceedings of the Plenary Sessions*, ed. by **Emiliano Fiori** and **Michele Trizio**, Venezia, Edizioni Ca' Foscari, 2022; *24th International Congress of Byzantine Studies. Abstracts of the Free Communications, Thematic Sessions, Round Tables and Posters*, ed. by **Luca Farina** and **Elef Eleftherios hterios Despotakis**, Venezia, Edizioni Ca' Foscari, 2022.

9 <https://edizionicafoscari.unive.it/it/edizioni/libri/978-88-6969-590-2/> լիազուցված նիստերի համար և <https://edizionicafoscari.unive.it/v4/it/edizioni4/libri/978-88-6969-634-3/> ամփոփումների համար:

Բյուզանդագիտական XXIV համաշխարհային համաժողովը հոյակապ «հոգևոր խորտիկներ» էր պատրաստել ոչ միայն գիտական զեկուլյցների տեսքով և թվային ցուցադրություններով, այլև Վենետիկում և Պադովայում անցկացվող բազմաթիվ միջոցառումներով՝ հայտնի թանգարաններ և շինություններ այցելություններով, ցուցահանդեսներով, համերգներով, գրքի շնորհանդեսներով և այլ ուշագրավ իրադարձություններով: Գրեթե բոլոր այդ միջոցառումները վերապահված էին կոնգրեսին գրանցված մասնակիցների համար և սկսած համաժողովի երկրորդ օրվանից մինչև վերջին օրը, երբեմն օրը երկու անգամ, առաջարկվում էր որևէ միջոցառում, օրինակ՝ Կիպրոսին նվիրված ցուցահանդեսը Մարշիանա գրադարանում, գիշերային էքսկուրսիան Սուրբ Մարկոսի տաճարում, «Թվային Բյուզանդիա» (“Digital Byzantium”) նախագծի շնորհանդես կամ Սալոնիկի Սբ. Երրորդություն վանքի Սուրբ Սիմեոն երգչախմբի համերգը և այլն: Ոչ պակաս կարևոր և օգտակար էր կոնգրեսի ողջ ընթացքում ամենահայտնի հրատարակչությունների գրքերի ցուցահանդես-վաճառքը:

Հայաստանի բյուզանդագիտական ուսումնասիրությունների ազգային կոմիտեն¹⁰ և մասնակցեց Բյուզանդագիտության XXIV համաշխարհային համաժողովին վեց անդամից բաղկացած պատվիրակությանը¹¹, որոնցից հինգն արվեստաբաններ էին՝ պ.գ.դ. պրոֆ. էռնա Մանեա Շիրինյան (Մաշտոցի անվան Մատենադարան, Հայաստանի բյուզանդագիտական ուսումնասիրությունների ազգային կոմիտեի նախագահ), ա. դ. պրոֆ. Աննա Արևշատյան (ԳԱԱ Արվեստի ինստիտուտ), արվեստագիտության թեկնածուներ, դոցենտներ Սեյրանուշ Մանուկյան (ԵՊՀ, Արվեստի ինստիտուտ) և Զարուհի Հակոբյան (ԵՊՀ), ինչպես նաև ԵՊՀ Արվեստի պատմության ամբիոնի երկու ասպիրանտ՝ Քազուհի Ավետիսյանը (գիտական ղեկավար՝ Զ. Հակոբյան) և Դիանա Գրիգորյանը (գիտական ղեկավար՝ Ս. Մանուկյան): Համաժողովին ներկա էր նաև Հայաստանի ազգային կոմիտեի արտասահմանյան անդամ, հայ արվեստի պատմության մասնագետ՝ Աննա Լեյլոյան-Եկմայանը:

Ուրախ և հպարտ լինելով, որ մեզանում շատ են արվեստի պատմությանը բաղկող մասնագետները, որոնց հաջողվել էր դրամաշնորհ հայթայթել և մաս-

¹⁰ Կոմիտեի կազմավորման և կանոնադրության մեջ ընդգրկված հիմնական դրույթների վերաբերյալ տեղեկությունը հասանելի է հետևյալ հոդվածում՝ **Շիրինյան Մ. է.**, 21-րդ «Բյուզանդագիտական միջազգային կոնգրեսը», *Աշտանակ. հայագիտական պարբերագիրք* Դ, Երևան 2011, էջ 162-172:

¹¹ Հայաստանից մեկնած մասնակիցների և նրանց կարդացած զեկուցումների մասին նաև կարելի է տեղեկանալ Ա. Արևշատյանի ֆեյսբուքյան հաղորդումից (տե՛ս ծան. 5): Այստեղ հարկ չեմ համարում կրկնել նույն տեղեկությունը, մասնավորապես որ մեր հետաբերությունների տարբերության պատճառով ո՛չ ես, ո՛չ էլ արվեստաբանները չկարողացանք լսել միմյանց զեկուցումները:

նակցել կոնգրեսին, չեմ կարող սակայն ցավով չնշել բյուզանդագիտության հետ առնչություն ունեցող պատմաբանների, բանասերների կամ աստվածաբանների բացակայությունը կարևոր այս համաժողովին: Այս առումով, երբ կարդում ես Բյուզանդագետների համաշխարհային կոնգրեսներին վերաբերող նախորդ հաշվետու հոդվածները¹² ակնհայտ է դառնում, որ բյուզանդագիտությունը մեզանում, այնուամենայնիվ վերելք չի ապրում (եթե չասենք՝ հակառակը):

Այնուամենայնիվ, 24-րդ համաշխարհային համաժողովում տեղ գտավ շատ կարևոր մի եղելություն, այն է՝ Լեոնային Ղարաբաղի տարածքի պատմական հուշարձանների պահպանման վերաբերյալ Հայաստանի Բյուզանդական հետազոտությունների ազգային կոմիտեի ներկայացրած հայտարարագիր-կոչի ընթերցումը: Թեև այս ծանր ժամանակներում նման բովանդակությամբ ուղերձներ, նամակներ, հայտարարություններ շատ են բարձրաձայնվել, գրվել և ուղարկվել տարբեր հասցեատերերի, և թվում է, որ դրանք ոչ մի արդյունք չեն տվել, սակայն, յուրաքանչյուր նման քայլ չի կարող անարձագանք մնալ:

Բոլոր դեպքերում, մեր հայտարարագիրը սպասվածից շատ ավելի մեծ շրջանառություն ստացավ. որպես ազգային կոմիտեի նախագահ՝ ես դիմել էի գործադիր բյուրոյի անդամներին, որպեսզի հնարավորություն տրվի ընթերցելու այս հայտարարագիրը համաժողովի ընթացքում: Քննարկումից հետո նրանք, մասնավորապես Բյուզանդական հետազոտությունների միջազգային ընկերության նախագահ Ջոն Հալդոնը և փոխնախագահ Աթանասիոս Մարկոպոլոսը դրական պատասխան տվեցին՝ միաժամանակ առաջարկելով տեղադրել այն նաև ընկերության «Տեղեկագրում»: Նախօրոք պատրաստած և Հայաստանի ազգային կոմիտեի անդամների հետ առցանց քննարկած տեքստս իսկույն ուղարկեցի «Տեղեկագրի» խմբագրին՝ Սերգեյ Մարիևին, որպեսզի այն լույս տեսնի հենց կոնգրեսին նվիրված համարում: Այդքանից հետո կարելի է պատկերացնել զարմանքս և զայրույթս, երբ լույս տեսավ «Տեղեկագրի» 58-րդ համարը, որի մեջ բացակայում էր մեր հայտարարագիր-կոչը: Իսկույն սկսեցի նամակներ հղել (առաջին հերթին «Տեղեկագրի» խմբագրին) և պարզաբանում պահանջել եղելություն վերաբերյալ: Սերգեյ Մարիևը երկու նամակ գրեց, հայցելով մեր ներդրամտությունը՝ ասելով, որ պարզապես մոռացել է և պատրաստ է առանձին հա-

¹² Տե՛ս օրինակ հետևյալ հոդվածներում՝ Կ. Յուզբաշյան, «Բյուզանդագիտական համաշխարհային XIII կոնգրեսը Օֆսֆորդում», ՊԲՀ, 1966, № 4, էջ 297-300, Հր. Բարթիկյան, «Բյուզանդագետների միջազգային XIV կոնգրեսը», ՊԲՀ, 1971, № 4, էջ 293-298, Մ. Է. Շիրինյան (Աշտանակ, տե՛ս ծան. 10): Հավելենք, որ եղել են ժամանակներ, երբ կոնգրեսին մասնակցելու համար դիմում են ներկայացրել գրեթե երկու տասնյակ գիտնական, օրինակ՝ 2006 թ. Լոնդոնում կայացած XXI կոնգրեսին:

վերլվածով իսկույն հրատարակել այդ տեքստը: «Տեղեկագրի» 58 համարի¹³ հատուկ «Հավելված»-ը՝ Issue 58, August 2022 (Addendum)¹⁴ լույս տեսավ մեկ օր անց: Հայցելով ընթերցողների ներողամտությունը՝ խմբագիրը հրատարակել էր մեր կոմիտեի կողմ հենց նույն ձևով, ինչպես որ ուղարկել էի վերոնշյալ ավազ-տոնյաներին՝ թավ կարմիր տառատեսակով, ինչն ավելի մեծ հնչեղություն հաղորդեց այս փաստաթղթին.

*The editors apologize for the omission of the following material that was scheduled to appear in the regular Issue 58 of the Newsletter. The omitted material is included below.*¹⁵

**Honourable colleagues,
the members of the Armenian National Committee for Byzantine Studies appeal to AIEB and to all the National Committees to express their solidarity with the statement recently made by the UNESCO intended to preserve historical monuments on the territory of Nagornyj Karabakh. We hope that our declaration may be conducive to monitoring the protection of ancient and medieval monuments on this territory, a part of which is found, as a result of the war of 2020, under Azerbaijan's control. In the light of numerous cases of intentional destruction of Armenian monuments on territories controlled by Azerbaijan (cf. in particular the destruction of mediaeval Armenian cemetery in Nakhichevan), as well as the erasure of Armenian inscriptions on churches and especially in view of the recent declarations made by Azerbaijani authorities intending to 'verify' the authenticity of ancient Christian monuments and to 'cleanse' them from what they claim to be traces of 'Armenianisation' of monuments of Caucasian Albania, the rich historical heritage of Nagornyj Karabagh is in imminent danger.**

Therefore, we call you to raise your voice against this cleansing of the millennia-long presence of Armenian culture on the territory of Nagornyj Karabakh.

¹³ <https://us17.campaign-archive.com/?u=719696e03a73ee3361188422f&id=668cd43c80>

¹⁴ <https://us17.campaign-archive.com/?u=719696e03a73ee3361188422f&id=1e932c4790>

¹⁵ «Խմբագիրները ներողություն են հայցում հետևյալ նյութի բացթողման համար, որը նախատեսվում էր հրապարակել Տեղեկագրի հերթական՝ 58-րդ համարում: Բացթողնված նյութը ներառված է ստորև: Հետաքրքրական է, որ այս կողմ վերնագրվեց որպես «Բողոքարկում», ինչը համապատասխանում է նշմարտությանը:

May our voice sound at least as eagerly as it did against the modification of the status of Hagia Sophia in 2020.

**1 June 2022
Yerevan¹⁶**

Մենք միտումնավոր ձևով էինք կապել այս հարցը բուն քննարկումների արժանացած Սբ. Սոֆիայի տաճարի խնդրի հետ՝ դնելով դրանք նույն համատեքստում, որպեսզի հանկարծ դիվանագիտորեն չըրջանցվի մեր հայտարարագիրը՝ շատերի համար անցանկալի և «գլխացավանք» պատճառող «Լեռնային Ղարաբաղ» արտահայտությունը լսելիս: Մատենադարանի տնօրինության անունից այս նույն համարում գետեղված է նաև 2023 թ. հունիսին Մատենադարանում անցկացվելիք «Ներսես Շնորհալի՝ բազմաշնորհ հայրապետը» խորագրով հայագիտական միջազգային գիտաժողովի հայտարարությունը¹⁷:

XXIV համաշխարհային կոնգրեսի առաջին իսկ ելույթներում հնչեցին պատմական հուշարձանների պահպանման կարևոր խնդրի և դրան հետամուտ լինելու հայտարարություններ: Հարկ է նշել, որ ընդհանրապես նման հայտարարությունները քննարկվում են միջազգային բյուրոյի կողմից, ուստի և մեր հայտարարագիր-կոչը քննարկման և քվեարկության դրվեց օգոստոսի 26-ին՝ Մարշիանա շքեղ գրադարանում կայացած՝ միջազգային բյուրոյի հիմնական հատուկ նիստի ժամանակ: Հայաստանի ազգային կոմիտեից այնտեղ ներկա էին է.Մ. Շիրինյանը և Ա. Լեյլոյան-Եկմալյանը: Սկզբում քննարկվեց երկու կարևորագույն հարց. Բյուզանդական հետազոտությունների միջազգային ընկերության նախագահի ընտրությունը և հաջորդ կոնգրեսի վայրի քվեարկությունը: Ընկերության նախագահ ընտրվեց Իտալիայի բյուզանդագիտական ուսումնասիրությունների ազգային կոմիտեի նախագահ՝ Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանի պրոֆեսոր Անտոնիո Ռիգոն: Ինչ վերաբերում է հաջորդ կոնգրեսին, ապա նախատեսված է այն անցկացնել 2026 թ. Վիեննայում՝ «Բյուզանդիան Բյուզանդիայի սահմաններից դուրս» նշանաբանի ներքո: Դրանից հետո Բյուզանդական հետազոտությունների միջազգային ընկերության նախագահ Ջոն Հալդոնը նորից անդրադարձավ պատմական հուշարձանների պահպանման հարցին և փաստարկեց, որ այնուամենայնիվ Բյուզանդական ուսումնասիրությունների միջազգային ընկերության հայտարարությունները մեծ ազդեցություն են գործում և աննկատ չեն մնում: Այդ ժամանակ բյուրոյի անդամներից մեկը խոսք պահանջելով ելույթ ունեցավ՝ շեշտելով, որ պետք է ընկերության անդամները տեղյակ լինեն,

¹⁶ Հայերեն քարգմանությունը տե՛ս ստորև, ծան. 19:

¹⁷ <https://us17.campaign-archive.com/?u=719696e03a73ee3361188422f&id=1e932c4790>

Թե ինչ հայտարարություններ են արվում իրենց անունից՝ հավանաբար նկատի ունենալով հենց Լեոնային Ղարաբաղի տարածքի պատմական հուշարձանների հարցը: Ջ. Հալդոնը՝ պարզաբանեց, որ բոլոր խնդիրները մշտապես քննարկվել են միջազգային բյուրոյի անդամների հետ և միայն դրանից հետո են հայտարարվել. ուստի և այժմ ինքը ընթացելու է Հայաստանի ազգային կոմիտեի ներկայացրած հայտարարագիր-կոչը: Այդ մեծահոգի արարքն իհարկե շահեկան էր մեր կոմիտեի համար: Ջ. Հալդոնը նաև ասաց, որ հարցերի դեպքում տարակուսողները կարող են դիմել Հայաստանի ազգային կոմիտեի այստեղ ներկա նախագահին (այդ պահին ես հասկացա, թե որքան կարևոր էր մեր պատվիրակության ներկայությունը): Քվեարկությունն անցավ միաձայն և մեր փոխադարձ համաձայնությունը Ջ. Հալդոնը հանձնարարեց արդեն ընտրված նոր նախագահին՝ Անտոնիո Ռիգոյին, ուղարկել այս կոչը Ադրբեջան և հետևել դրա զարգացումներին: Նորընտիր նախագահը ևս պատրաստակամություն հայտնեց ստանձնելու այդ գործը՝ օգտագործելով «Արցախ» եզրը Լեոնային Ղարաբաղի փոխարեն: Նա հիշատակեց այս խնդիրը նաև համաժողովի փակման իր խոսքում:

Աննա Լեյոյան-Եկմալյանը¹⁸ նկարահանեց և ձայնագրեց ողջ գործընթացը: Պետք է ասել նաև, որ նա դեռևս օգոստոսի 24-ին՝ «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» ծրագրի կայքէջում, տեղեկատվություն հրատարակեց մեր հայտարարագիր-կոչի վերաբերյալ՝ ներկայացնելով նաև դրա հայերեն թարգմանությունը¹⁹: Հետաքրքրական է, որ հենց նույն օրը տեղեկու-

¹⁸ Կովկասի Բրիտանյա ժողովուրդների միջնադարյան արվեստի պատմությամբ, Արևելյան Եկեղեցիների պատկերազրույցյան համեմատական ուսումնասիրությամբ զբաղվող Աննա Լեյոյան-Եկմալյանը Փարիզի Արևելյան Լեզուների և Քաղաքակրթությունների Պետական Ինստիտուտի (INALCO) դոցենտ է (<http://www.inalco.fr/enseignant-chercheur/anna-leylan-yekmalyan>), Փարիզի Ոստանդական Ոստանի Հայ Ոստանդների Տան տնօրենն է (<https://www.ciup.fr/en/governance-of-the-maison-des-etudiants-armeniens/>), ինչպես նաև պրոֆ. Ն. Պետրոսյանի հետ «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» (MONUMENT WATCH, <https://monumentwatch.org>) ծրագրի և անկախ ակադեմիական հարթակի համահիմնադիր և գիտական ղեկավարն է: Օգտվելով առիթից՝ ուզում եմ հատուկ շնորհակալություն հայտնել Աննա Լեյոյան-Եկմալյանին, որը, թեև զեկուցմամբ չէր մասնակցում համաժողովին, բայց մեր պատվիրակության թերևս ամենագործունյա և եռանդուն մասնակիցն էր: Նա ոչ միայն օգտակար եղավ հատուկ նիստին իր ներկայությամբ, այլև տառածեց մեր հայտարարությունը ի սփյուռս աշխարհի և հնարավորինս այցելելով համաժողովի բոլոր միջոցառումներին ներկայացնում էր մեր Ազգային կոմիտեն:

¹⁹ <https://monumentwatch.org/en/2022/08/>. Բյուզանդական ուսումնասիրությունների Հայաստանի ազգային կոմիտեն հանդես է եկել հատուկ կոչով (որտեղ մասնավորապես նշվում է. «Հարգելի՛ գործընկերներ, Բյուզանդական հետազոտությունների Հայ ազգային կոմիտեի անդամները դիմում են Բյուզանդական ուսումնասիրությունների միջազգային ընկերությանը (L'Association Internationale des Études Byzantines) և Ազգային բոլոր կոմիտեներին՝ իրենց համախոհությունը հայտնելու ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից վերջերս արված հայ-

թյունը վերատապվեց նաև Հայաստանում «Առավոտ» թերթում «Թող մեր ձայնը հնչի առնվազն նույնքան բարձր, որքան 2020-ին Այա Սոֆիայի կարգավիճակի փոփոխության դեմ է հնչել. Բյուզանդական ուսումնասիրությունների Հայ ազգային կոմիտեի կողք» վերնագրի ներքո²⁰:

Բազմիցս է խոսվել բյուզանդագիտության կարևորության մասին²¹, հատկապես այն ժողովուրդների համար, որոնք ժամանակին ոչ միայն մաս են կազմել բյուզանդական մշակույթի, այլև կարևոր դեր են ունեցել Բյուզանդիայի կառավարման ոլորտում: Հայերը մեծ դեր են խաղացել Բյուզանդական կայսրության մեջ, այդ քաղաքակրթության ոլորտում ազդեցություն են ունեցել և միաժամանակ կրել Բյուզանդիայից, զբաղեցրել են ամենաբարձր պաշտոններ՝ ընդհուպ մինչև կայսեր պաշտոնը, և բազում նեղություններ, հարձակումներ կրել Հայաստանի տարածքին, մշակույթին և ժողովրդին (դավանանքի միջոցով) մշտապես տիրանալ ձգտող այդ երկրից: Զարմանալիորեն այս վերջին հանգամանքը որոշակի ազդեցություն է գործել հայազգի պատմաբանների, բանասեր-

տարառությանը, որը միտված է պահպանել Լեոնային Ղարաբաղի տարածքի պատմական հուշարձանները: Հուսով ենք, որ մեր հայտարարությունը կարող է նպաստել այս տարածքում հնագույն և միջնադարյան հուշարձանների պահպանության մշտադիտարկմանը, որոնց մի մասը 2020 թվականի պատերազմի արդյունքում անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ: Ադրբեջանի կողմից վերահսկվող տարածքներում հայկական հուշարձանների միտումնավոր ոչնչացման բազմաթիվ դեպքերի լույսի ներքո (տե՛ս մասնավորապես Նախիջևանի միջնադարյան հայկական գերեզմանոցի ավերումը), ինչպես նաև եկեղեցիների վրա հայերեն արձանագրություններ ջնջելու և հատկապես վերջին հայտարարությունները՝ արված ադրբեջանական իշխանությունների կողմից, որոնց նպատակն է «ստուգել» հին Բրիտանացիական հուշարձանների իսկությունը և «մաքել» դրանք Կովկասյան Աղվանքի հուշարձանների «հայկականացման» հետեւերից, Լեոնային Ղարաբաղի հարուստ պատմական ժառանգությունը անմիջական վտանգի տակ է գտնվում: Ուստի կոչ ենք անում ձեր ձայնը բարձրացնել Լեոնային Ղարաբաղի տարածքում հայկական մշակույթի հազարամյա գոյության վկայությունների ոչնչացման դեմ: Թող մեր ձայնը հնչի առնվազն նույնքան բարձր, որքան 2020 թվականին Այա Սոֆիայի կարգավիճակի փոփոխության դեմ է հնչել: Հունիսի 1 2022 թ.»:

²⁰ Ամբողջական հոդվածը կարելի է կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/08/24/1287137/>:

²¹ Մեզանում այս հարցի հետ կապված խնդիրները լավագույնս լուսաբանված են Հր. Բարթիկյանի ցանկացած աշխատանքում: Դրանք ֆննարկված են նաև որոշ իմ՝ հիմնականում Հրաչ Բարթիկյանին նվիրված հոդվածներում (Մ. Է. Շիրինյան, «Պատիվ և հարգանք (Титул и уважение)», *Տարեգիրք Բ, ԵՊՀ*, Աստվածաբանության ֆ-տ, Երևան 2007, էջ 46-57, Մ. Է. Շիրինյան, «De Viris Illustribus: сравнительное жизнеописание двух славных мужей – Грача Михайловича Бартикяна и Гюнтера Христиана Хансена. Памяти Гр.М. Бартикяна и Гюнтера Христиана Хансена», *Византийский Временник*, 100 (2016), pp. 361-365, Մ. Է. Շիրինյան, Վ. Թորոսյան, «Հրաչ Բարթիկյան. Պատմաբան, բյուզանդագետ, հայագետ և պարզապես հիաստանային մարդ (ծննդյան 95-ամյակի առթիվ)», *Բանբեր Գաղափարության*, N2(29), 2022, էջ 249-256), հմմտ. նաև՝ Շիրինյան, *Աշտանակ*:

ների և աստվածաբանների վրա (հատկապես եթե նրանք հոգևորական են): Թերևս սա է պատճառներից մեկը, որ արվեստի պատմությանը զբաղվող մասնագետներն են առավել հետաքրքրված բյուզանդագիտությանը: Հաճախ, երբ հրաժարվում ես քո մշակութային ժառանգությունից, որը չի համապատասխանում ընդունված կանոններին կամ կաղապարին, մեծ վտանգ կա, որ կորցնես դրա մի մեծ շերտ. շատ արագ հայտնվում են տերեր, որոնք յուրացնում են այդ հարստությունը:

Մասնավորապես այսօր առկա քաղաքական զարգացումների ներքո անգամ անտեղյակ մարդու համար հասկանալի է դարձել, թե որքան անհրաժեշտ է ոչ միայն միջնադարագիտության (և դրա կարևորագույն մաս կազմող բյուզանդագիտության), այլև անտիկ շրջանի մշակույթի համապարփակ ուսումնասիրությունը:

Սույն հոդված-հաշվետվության²² մեջ ես փորձեցի ուրվագծել համաժողովում մշտապես տիրող քաղաքականացված միջնուլորտը, թեև այն փոխանցելու համար պետք է գեթ մեկ անգամ մասնակցել, օրինակ, միջազգային բյուրոյի հատուկ նիստին: Սա նաև լավ առիթ է հիշեցնելու բյուզանդագիտական ուսումնասիրությունների Հայաստանի ազգային կոմիտեի մասին, որոշ չափով լուսաբանելով նրա գործունեությունը, որը լավ աշխատելու դեպքում կարող է զարմանալի արդյունքների հասնել (ինչն, իհարկե, մեկ-երկու հոգու գործ չէ):

Համաշխարհային գիտության մեջ ընդունված է, որ յուրաքանչյուր հիմնական ճյուղ հիմնադրի ընկերություն կամ ասոցիացիա, որն ունի տեղեկատվական կամ մասնագիտական հրապարակումների մատենաշար և տարբեր պարբերականություններ տվյալ ոլորտի զարգացմանը խթանող համաժողովներ է կազ-

²² Ինչ վերաբերում է իմ մասնակցությանը՝ ես ներկա եմ եղել Հայաստանին վերաբերող և ինձ հետաքրքրող զեկուցումներին և ֆինանսավորման, ծանոթացել և նոր կապեր եմ հաստատել տարբեր երկրների մասնագետների հետ և մասնակցել եմ Բյուզանդական հետազոտությունների միջազգային ընկերության ընդհանուր ժողովին՝ որպես Հայաստանի Բյուզանդական հետազոտությունների ազգային կոմիտեի նախագահ: Միջազգային կարևորություն ունեցող այս կոնգրեսի ընթացքում կարդացել եմ զեկուցում «Որոշ դիտարկումներ փոխարկությունների վերաբերյալ Բյուզանդական կայսրությունում» “Some Observations Concerning the Forgeries in Byzantine Empire” (The 24th International Congress of Byzantine Studies, Venice-Padua, 22-27 August 2022, Programme p. 11; Abstract. p. 260, տե՛ս https://edizionicafofoscari.unive.it/media/pdf/books/978-88-6969-634-3/978-88-6969-634-3_kOVRjwV.pdf): Իմ հանելի պարտականությունն եմ համարում շնորհակալություն հայտնել ՆԱԱՄԻ-ին (NAASR - The National Association for Armenian Studies and Research) Բյուզանդագիտության համաշխարհային կոնգրեսին մասնակցելու դրամաշնորհ տրամադրելու համար:

մակերպում²³: Այդ ընկերությունները տարբեր երկրներում այսպես կոչված ազգային կոմիտեներով են ներկայացվում: Արձանագրենք, որ Բյուզանդագիտական ուսումնասիրությունների ազգային կոմիտեները գեոևս միակ նման կառույցն է Հայաստանում:

Անգնահատելի անկախություն ձեռք բերելուց հետո մեր գիտությունը որոշակի հետնահանջն ունի իր պատճառները. Հայաստանի գիտությունը խորհրդային Ռուսաստանի մասն էր կազմում, և մեր գիտնականները ներգրավված էին և՛ բյուզանդագիտության, և՛ գիտության այլ կարևոր ոլորտներում²⁴: Ինչ-ինչ բնագավառներում՝ շունենալով ինքնուրույն գիտական «գարոց», խորհրդային շրջանում մասնագետները լրացնում էին այդ բացը հարուստ ավանդություն և մեծ հնարավորություններ ունեցող Ռուսաստանում: Այսօր ուսանողներ են մեկնում նաև այլ առաջադեմ երկրներ, սակայն դեռևս՝ մասնավորապես հումանիտար ոլորտում, լայն իմաստով «գարոցի» պակասն ակնհայտ է:

Չափազանց կարևոր համարելով այս հարցերը՝ հուսանք, որ դրանք կարժանան ոչ միայն յուրաքանչյուրիս, այլև համապատասխան մարմինների ուշադրությանն ու մտահոգությանը:

²³ Այս առումով Հայաստանի հումանիտար գիտության համար առավել հետաքրքրական են հայրաբանության և Աստվածաշնչին վերաբերող ընկերությունները և համաժողովները, ինչպիսիք են օրինակ՝ Studiorum Novi Testamenti Societas (SNTS), որը հիմնադրվել է դեռևս 1938 թ. կամ *International Association of Patristic Studies* (IAPS կամ *L'Association Internationale d'Études Patristiques A.I.E.P.*): Այս ընկերությունն ի թիվս այս գիտաժողովների պարբերաբար միջազգային համաժողով է կազմակերպում Օֆսֆորդում (*International Conference on Patristic Studies*), որի ընթացքում կարդացած զեկուցումները՝ գրախոսական ֆննություն անցնելուց հետո, ընդունվում և տպագրվում են 1957 թ. հիմնադրված հայրաբանության ուսումնասիրության ոլորտում հայտնի *Studia Patristica* ակադեմիական շարքում (ի տարբերություն բյուզանդագիտության համագումարի նյութերի, որոնք միշտ չէ, որ հրատարակվում են):

²⁴ Օրինակ, խորհրդային շրջանում Հին Արևելքով զբաղվող՝ հիմնականում Արևելագիտության ինստիտուտի, մեր մասնագետները մշտապես մասնակցում էին այդ ոլորտում ամենահայտնի ամենամյա համաժողովներին, որոնք կազմակերպում էր Ասորեստանով զբաղվող միջազգային ընկերությունը (RAI=Rencontre Assyriologique Internationale կամ The International Association for Assyriology=IAA):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Ազատ Բոզոյան

Անտիոֆի դերը Լևոն Մեծագործի ֆաղափականության մեջ..... 5

Կարեն Մաթևոսյան

Ռուսի սուլթանության հակաթոռ կաթողիկոս Անանիան 22

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում 40

Էլինա Ղազարյան

Հարավային Կովկասի ֆաղափների դերը տարանցիկ
առևտրում ըստ Ժ.-Ժ.Գ. դարերի պարսկական և արաբական
պատմաաշխարհագրական երկերի 60

Գեորգի Միրզաբեկյան

1590 թ. Մելիֆ-Արալանլուի օսմանյան հարկացուցակը..... 74

Հայկազ Հովհաննիսյան

Մատենադարանի Ալ. Երիցյանի արխիվ. «Հյուսիսսփայլ» ամսագրի
հրատարակման նախապատմությունը..... 83

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Գևորգյան

Գրիգոր Բ. Վկայասերի նախաձեռնած թարգմանական շարժումը 93

Դոնարա Կարապետյան

Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանի
գրավոր աղբյուրները..... 113

Աննա Օհանջանյան

Դավանանքից դավանաբանական անցնելով. հայ կաթողիկ Հովհաննես Մշեցիև և նրա
հեղինակած «Բանալի նշմարտութեան» գիրքը (անգլերեն)..... 131

ԱՐՎԵՍ

Ավետ Ավետիսյան

«Իսահակի զոհաբերության» պատկերագրական տարբերակները
հայկական մանրանկարներում..... 166

Սեդա Մանուկեան

Բոնաշէնի մանրանկարչութեան մի օրինակ (Մատենադարանի ձեռ. 10789)..... 199

Աննա Արեշատյան

Դիտարկումներ Մակար Եկմայանի և Կոմիտասի դաշնակաձ պատարագի
մոնոդիաների մեղեդիական մտածողության շուրջ..... 212

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Անի Առաքելյան

Սուլեյման Դարաշամբեցի կատակերգակը և նրա նորահայտ երկերը..... 233

Լուսինե Թումանյան

Հովհաննես Բրգութենցի գանձերն ու տաղերը 268

Հասմիկ Կիրակոսյան

Նորահայտ մի փաստաթուղթ Շուշիում ավետարանական ֆարոգիչների
գործունեության մասին 295

Միհրան Մինասեան

Մշոյ Ս. Առաքելոց, Մատնավանք և Ս. Յովհաննէս վանքերու թեմական
գիւղերու, Բասենի ու Թախթի հայկական եկեղեցիներու, վանքերու և
գերեզմանատուններու անտիպ ցուցակ (1861-1866 թթ.)..... 305

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գեորգ Տէր-Վարդանեան

Հայերէն հնատիպ գրքերի ձեռագիր գրառումների և գրադարանային
նշումների Դիւանի կազմութեան ծրագիրը 321

Տաթևիկ Մանուկեան, Քնարիկ Սարգսեան

Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրքերի ձեռագիր և
գրադարանային նշումները (ընդհանուր պատկեր) 330

Հերմինէ Գրիգորեան

Յուցակ կիսաբունի Կիլպէնկեան թանգարանի հայերէն ձեռագրերի 350

ԲԱՆԱՎԵՃ**Նարինէ Վարդանյան**

«Կանոնագիրք հայոց» ժողովածուի զարգացման
պատմությունը. ուսումնասիրություն, թե՞ խեղաթյուրում 377

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Մանեա Էնա Շիրինյան**

Բյուզանդագետների համաշխարհային XXIV համաժողովը 420

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ**Նազենի Ղարիբյան**

Վասն կենաց եւ գործոց Նինայի Գարսոյեան (1923-2022) 432

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ

ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ 438

CONTENTS

HISTORY

Azat Bozoyan

The Role of Antioch in the Policy
of Levon the Magnificent5

Karen Matevosyan

Anticatholicos Anania of the Sultanate of Rum22

Gagik Danielyan

Official Correspondence and Diplomatic
Gifts in the Armenian-Mongol Relations (part 3).....40

Elina Ghazaryan

The Role of South Caucasian Towns
in Transit Trade According to the Persian and Arabic
Historico-Geographical Works of 10th-14th Centuries.....60

Georgi Mirzabekyan

The Ottoman Tax Register of Melik-Arslanlu of 1590.....74

Haykaz Hovhannisyan

Matenadaran, Archive of Al. Yeritsyan: Prehistory
of the Publication of the Journal “Nortern Lights”.....83

PHILOLOGY

Davit Gevorgyan

The Translational Movement Initiated by Grigor II V kayaser.....93

Donara Karapetyan

The Written Sources of Asar Sebastats‘i’s
Book of Medical Art.....113

Anna Ohanjanyan

Jumping In and Out of Confessions: The Armenian Catholic Yovhannēs
of Mush and his Book *Key of Truth*.....131

ART

Avet Avetisyan

The Iconographic Versions of *the Sacrifice Of Isaac*
in Armenian Miniatures.....166

Seda Manukyan

A Specimen of the Břnashen Miniature Art..... 199

Anna Arevshatyan

Observations on the melodic thinking in
the monodies of the Liturgy in the arrangements
by Makar Yekmalian and Komitas..... 212

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Comedian Suleiman Darashabets‘i and
His Newly Discovered Poems..... 233

Lusine Tumanyan

The Litanies and Odes of Yovhannēs Brgut‘Ents‘..... 268

Hasmik Kirakosyan

A Recently Discovered Document about the Activity
of Evangelical Missionaries in Shushi..... 295

Mihran Minassian

A Previously Unpublished List of Diocesan Villages of the
Monasteries of Surp Arakelots in Mush, Madnavank and Surp Hovhannes,
as well as Armenian Churches, Monasteries and Cemeteries
of Pasen and Takht (1861–1866)..... 305

BIBLIOGRAPHY**Georg Ter-Vardanean**

The Program of Composing the Corpus of
Handwritten Remarks and Library Notes in
Armenian Early Printed Books..... 321

Tatevik Manukyan, Knarik Sargsyan

Handwritten and Library Notes of Early Printed Books
of Mesrop Mashtots Matenadaran (General Picture)..... 330

Hermine Grigoryan

Catalogue of the Armenian Manuscripts of the
Gulbenkian Museum in Lisbon..... 350

DISCUSSION**Narine Vardanyan**

History of the Development of the Armenian Book of Canons.

Study or Misrepresentation?.....377

REPORT**Manea Erna Shirinian**

The XXIV International Congress of Byzantine Studies.....420

OBITUARY**Nazenie Garibian**

The Life and Work of Nina Garsoïan (1923-2022).....432

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Азат Бозоян	
Роль Антиохии в политике Левона Великого.....	5
Карен Матевосян	
Антикатоликос румского султаната Анания.....	22
Гагик Даниелян	
Официальная переписка и дипломатические дары в армяно-монгольских отношениях (часть 3).....	40
Элина Казарян	
Роль Городов Южного Кавказа в транзитной торговле по данным персидских и арабских историко-географических трудов X-XIV веков.....	60
Георгий Мирзабекян	
Османский налоговый реестр Мелик-Арсланлу 1590 г.	74
Айказ Оганесян	
Матенадаран, архив Ал. Ерицяна: Предыстория издания журнала “Северное сияние”.....	83

ФИЛОЛОГИЯ

Давид Геворгян	
Переводческое движение, начатое Григором II Вкаясером.....	93
Донара Карапетян	
Письменные источники лечебника Асара Себастици “Книга врачебного искусства”.....	113
Анна Оганджян	
Переходя из одной конфессии в другую: армяно-католик Ованес из Муша и его книга «Ключ истины».....	131

ИСКУССТВО

Авет Аветисян	
Иконографические варианты “Жертвоприношения Исаака” в армянских миниатюрах.....	166
Седа Манукян	
Образчик брнашенской школы миниатюры.....	199
Анна Аревшатян	
Наблюдения над мелодическим стилем монодий литургии в многоголосных обработках Макара Екмаляна и Комитаса.....	212

ПУБЛИКАЦИИ

Ани Аракелян

Сатирик-комик Сулейман Дарашамбский и его неизвестные стихотворения..... 233

Лусине Туманян

Гандзы и таги Ованеса Бргутенца 268

Асмик Киракосян

Новонайденный документ, описывающий деятельность евангелических миссионеров в Шуши 295

Мигран Минасян

Ранее не публиковавшийся список епархиальных сёл монастырей Сурб Аракелоц, Матнаванк и Сурб Ованес, а также армянских церквей, монастырей и кладбищ Басена и Тахта (1861-1866 гг.)..... 305

БИБЛИОГРАФИЯ

Геворг Тер-Варданян

Программа составления свода рукописных записей и библиотечных заметок на старопечатных армянских книгах 321

Татевик Манукян, Кнарик Саргсян

Рукописные и библиотечные записи старопечатных книг Матенадарана им. Месропа Маштоца (общая картина)..... 330

Эрмине Григорян

Каталог армянских рукописей, хранящихся в музее Гюльбенкяна в Лиссабоне 350

ДИСКУССИЯ

Нарине Варданян

История развития “Армянской Книги канонов”. Исследование или искажение фактов? 377

СООБЩЕНИЕ

Манеа Эрна Ширинян

XXIV всемирный конгресс византинистов 420

НЕКРОЛОГ

Назени Гарибян

Жизнь и деятельность Нины Гарсоян (1923-2022)..... 432

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 34

BULLETIN OF MATENADARAN

Volume 34

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 34

Համակարգչային ձևավորումը և էչադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 28

տպամանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի քվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/